ՀՏԴ 82-9

Լրագրություն

Անուշ ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ
ԱրՊՀ գրականության և լրագրության ամբիոնի ասպիրանտ
G-mail: anush.dolukhanyan.91@gmail.com

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների աննախադեպ զարգացումը հանգեցրեց հասարակության տեղեկատվայնացմանը, որտեղ գերիշխող են թվային արտադրանքի ստեղծումն ու իրացումը: Այսպիսի հարաբերությունների պայմաններում աշխարհն առաջնորդվում է ազգային շահերն արտացոլող, դրանց իրականացման հիմնական ուղղություններն ու մեխանիզմները սահմանող տեղեկատվական քաղաքականությամբ:

Անկախ գոյության առաջին տարիներից Արցախի Հանրապետությունը քայլեր է ձեռնարկել այս ուղղությամբ՝ տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացում, տեղեկատվական հասարակության ստեղծում, մեդիադաշտի օրենսդրական կարգավորում, գերատեսչական կառույցների ստեղծում և այլն: Այսինքն՝ ստեղծվել են տեղեկատվական քաղաքականության ներդրման և իրականացման հիմքեր, բայց ոչ փաստացի տեղեկատվական ռազմավարություն: Հատկապես քաղաքական ներկայիս օրակարգը պահանջում է ներքին և արտաքին տեղեկատվական հոսքերի կառավարման մեխանիզմներ, որոնք ամրագրված պիտի լինեն ուղենշային փաստաթղթերով:

Համաշխարհային և տարածաշրջանային ներկայիս մարտահրավերների համատեքստում Արցախի համար տեղեկատվական համակարգային քաղաքականության մշակումն ու ներդրումը ոչ միայն արդիական են, այլև խիստ անհրաժեշտ, առավել ևս, երբ առկա են մի շարք հնարավոր նախադրյալներ:

Բանալի բառեր՝ *Արցախի Հանրապետություն, ԼՂՀ, տեղեկատվական քաղաքականություն, թվային*

հասարակություն, մեդիադաշտ, տեղեկատվական հոսք, մեդիակարգավորում:

A. Dolukhanyan

PRECONDITIONS FOR INFORMATION POLICY IN ARTSAKH REPUBLIC (NKR)

Unprecedented rise of information and communication technologies resulted in informed society, dominated by creation and implementation of digital products. As a result of these relations the world is led by information policy on national needs, as well as main fields and mechanisms of their implementation.

From the start of independent existence Artsakh Republic has taken steps towards technological development, formation of informed society, legal regulation of media, creation of government sections, etc.. Thus, foundations for introducing an implementing information policy were laid, but the actual information policy was not created. Current political agenda puts forward vital demand for basing mechanisms regulating internal and external information flows on guiding documents.

Global and regional challenges point to urgency and pressing necessity of creation and implementation of informational systematic policy given the availability of potential preconditions.

Key words: Artsakh Republic, NKR, information policy, digital society, mediafield, information flow, media regulation

А.Долуханян

ПРЕДПОСЫЛКИ ИНФОРМАЦИОННОЙ ПОЛИТИКИ В РЕСПУБЛИКЕ АРЦАХ (НКР)

Беспрецедентный рост информационных и коммуникационных технологий привел к информированному обществу, в котором доминируют создание и внедрение цифровых продуктов. В результате таких отношений мир руководствуется информационной политикой о национальных потребностях, а также об основных областях и механизмах их реализации.

С самого начала независимого существования Республика Арцах предприняла шаги в направлении технологического развития, формирования информированного общества, правового регулирования СМИ, создания правительственных секций и т.д. Таким образом, были заложены основы для введения в действие информационной политики, но информационной политики, как таковой, фактическая не была создана. Текущая политическая повестка дня требует механизмов для управления внутренними и внешними информационными потоками, которые должны быть изложены в руководящих документах.

Глобальные и региональные проблемы указывают на срочность и насущную необходимость создания и реализации информационной систематической политики с учетом наличия потенциальных предварительных условий.

Ключевые слова: Республика Арцах, НКР, информационная политика, цифровое общество, медиаполе, информационный поток, медиарегулирование.

20-րդ դարի համաշխարհային հանրության գերիշխող միտումներից մեկը անցումն է սոցիալական նոր՝ ժողովրդավարական կամ բաց հասարակության մոդելին: Տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների սրընթաց վերափոխումները, իրենց տիրապետության տակ առնելով հասարակության կենսագործունեության բոլոր ոլորտները, այս իրողությանն արձագանքելու գործառույթներ պարտադրեցին կառավարություններին: Այս միտմամբ ի հայտ եկան տարաձևաչափ կառույցներ՝ ապահովելու, միաժամանակ վերահսկելու բաց հասարակության գաղափարը:

Հասարակության զարգացման այսպիսի առանձնահատկությունը օբյեկտիվորեն թելադրում է հանրային կառավարման այնպիսի համակարգի առկայություն, որը «կպաստասխանի» ոչ թե հասարակության որոշակի շերտերի (մեծամասնության կամ փոքրամասնության), այլ հանրությանն ամբողջությամբ: «Բոլորի» ազատության հասարակության փոխակերպման գործընթացներն էլ հող նախապատրաստեցին տեղեկատվական հեղափոխության համար՝ անհատի ազատությունը դնելով հասարակության լայն շերտերի բառապաշարում կայուն տեղ զբաղեցրած տեղեկատվական կամ թվային հասարակության գաղափարի հիմքում:

Տեղեկատվական հասարակության վերաբերյալ բազմաթիվ մոտեցումներից համապարփակ մի սահմանում առավելագույնս արտացոլում է երևույթի էությունը. «Տեղեկատվական հասարակությունը հասարակական և, ամենից առաջ, արտադրական հարաբերությունների զարգացման վիճակ է, երբ համախառն արտադրանքի հիմնական մասը ստեղծվում է ոչ թե նյութական արտադրության շնորհիվ, այլ բարձր տեխնոլոգիաների և տեղեկատվական արտադրանքի ստեղծման ու վաճառքի, այսինքն՝ քաղաքացիների ինտելեկտուալ աշխատանքի արդյունքի հիման վրա»[1]: «Տեղեկատվական այսօրինակ հեղափոխությունը թույլ է տալիս ասելու, որ առաջիկա տարիներին տեղեկատվական հասարակությունը որոշ երկրների համար լինելու է իրականություն, մյուսների համար՝ զարգացման ուղենիշ»[2],- նկատում է Յու. Նիսնևիչը:

Համաշխարհային այսպիսի միտումները նոր մարտահրավերներ առաջադրեցին՝ առաջնահերթություն վերապահելով նշյալ իրողությունները պետական մակարդակով իրական ժամանակում գնահատող և հաշվարկող,

---

[1] ***WITSA statement on the wold summit on the information society,*** *draft declaration of principals and action plan. URL: https://witsa.org/(վերջին այցելությունը՝27.07.2019):*

[2]***Нисневич Ю.,*** *Информационная политика России: проблемы и перспективы, Москва., 1998, стр. 20.*

դրանց լուծման ուղիները նախանշող ռազմավարական պլանավորմանը: Պետական քաղաքականության տեսանկյունից ասվածը նորություն չէ: Նոր կարող են լինել տեղեկատվական քաղաքականության համալիր մոտեցումները, որոնցով համակարգային մոտեցում պիտի ցուցաբերվի տեղեկության ստեղծման, տարածման, պահպանման և օգտագործման գործընթացներին:

Պետության տեղեկատվական քաղաքականության տեսության, բովանդակության, գործիքակազմի և այլնի վերաբերյալ տեսաբանները առաջ են քաշում կարծիքներ, որոնցից յուրաքանչյուրը երևույթը մեկնաբանում է յուրովի: «Պետության տեղեկատվական քաղաքականությունը քաղաքական, իրավական, տնտեսական, սոցիալ-մշակութային և կազմակերպական միջոցառումների համալիր է՝ ուղղված քաղաքացիների՝ տեղեկատվություն ստանալու սահմանադրական իրավունքի իրացմանը: Տեղեկատվական քաղաքականությունը մարդկանց գործունեության հատուկ ոլորտ է, որ կապված է տեղեկատվության վերարտադրողականության և տարածման, պետության և քաղաքացիական հասարակության հետաքրքրությունների բավարարման հետ՝ նրանց և նրանց ներկայացուցիչներին ուղղված ստեղծագործական, կառուցողական երկխոսությանը»[1],- գրում է Վ. Պոպովը: Ա. Մանոյլոն տեղեկատվական քաղաքականությունը համարում է «մարդկանց (քաղաքագետներ, գիտնականներ, վերլուծաբաններ, լրագրողներ, ունկնդիրներ և ընթերցողներ) կենսագործունեության ոլորտ՝ կապված տեղեկատվության վերարտադրման և տարածման, սոցիալական խմբերի և հասարակական կառույցների հետաքրքրությունների բավարարման հետ»[2]:

Պարզ ձևակերպմամբ, տեղեկատվական քաղաքականությունը քաղաքացիական հասարակության և պետական իշխանության տեղեկատվական փոխազդեցությունն է, որով պայմանավորվում է պետության բնականոն զարգացման ընթացքը:

Տեսաբաններն առանձնացնում են տեղեկատվական քաղաքականության այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են տեղեկատվական ոլորտի (որպես պետական կառավարման օբյեկտի) ֆունկցիոնալ վերլուծությունը և հայեցակարգային ձևակերպումը, ազգային տեղեկատվական օրենսդրական բազայի ձևավորումը և զարգացումը, իրավական ակտերով ամրագրված տեղեկատվական ոլորտի համակարգման կազմակերպական-տեխնոլոգիական ապահովումը[3]: Այսպիսի փոխազդեցությունը բնական է և հաճախ տեղի է ունենում ինքնաբերաբար: Այլ բան է, երբ պետություն-հասարակություն երկխոսությունը համակարգային բնույթ է կրում: Ասվածը թույլ է տալիս փաստելու, որ առանց նպատակային

---

[1] ***Попов В.Д.,*** *Информациология и информационная политика. Москва, 2001, стр. 68:*

[2] ***Манойло А.В.*** *Государственная информационная политика в особых условиях: Москва, 2003, стр. 20.*

[3] *Տես՝* ***Нисневич Ю.,*** *Информационная политика России: проблемы и перспективы, Москва, 1998, стр. 11.*

տեղեկատվական քաղաքականության պետությունը չի կարող հավակնել առաջատարի դիրքերի նաև համաշխարհային հանրույթում: Այս հիմքով իրականացված ուսումնասիրությունները փաստում են, որ աշխարհի առաջատար երկրների արտաքին քաղաքական և տնտեսական առաջանցիկ տեմպերը մասամբ պայմանավորված են տեղեկատվական քաղաքականության ռազմավարությամբ, որի նպատակները, խնդիրներն ու սկզբունքները ամրագրված են տարաձևաչափ փաստաթղթերում:

Վերոնշյալն օրախնդիր է քաղաքական նոր կազմավորում և չճանաչված երկրի կարգավիճակ ունեցող Արցախի Հանրապետության համար: Դառնալով հարցի պատմությանը՝ նկատենք, որ վերոնշյալ գործընթացները տեղայնացնելու միտումներ ի հայտ եկան Հանրապետության հռչակումից շատ չանցած: 1991-1992 թվականներին նորանկախ երկրի լրատվությունը համակարգելու փորձեր ձեռնարկեցին ԼՂՀ Գերագույն խորհրդի լրատվական ծառայությունը և ԼՂՀ Պաշտպանության պետական կոմիտեի տեղեկատվության և մամուլի դեպարտամենտը: Այս կառույցների գործունեությունը, սակայն, բավարար չէր մեդիահոսքերն ըստ էության վերահսկելու համար. «ԶԼՄ-ների քանակական և որակական թերացումները ակնհայտորեն պայմանավորված էին տնտեսության վերականգնմամբ, այսինքն՝ ետպատերազմյան շրջանի առաջնահերթությունները բխեցվում էին հանրային օրախնդիր հարցերի՝ հատկապես տնտեսական ենթակառուցվածքների վերականգնման շրջանակներից»[1]:

Պատերազմի հետևանքները հաղթահարել շարունակող երկիրը մեդիան վերջնականապես առաջաներթություն սահմանեց 2000-ականներից, երբ ձևավորեց նախ ԼՂՀ տեղեկատվության և մամուլի վարչությունը[2], ապա՝ ԼՂՀ Կառավարությանն առընթեր տեղեկատվության վարչությունը[3]՝ դաշտի կարգավորման մեխանիզմների մշակման և ներդրման գործառութային պարտականություններով: Կառույցների կանոնադրությունների ուսումնասիրությունը թույլ է տալիս ասելու, որ վերջիններս ունեին գործառութային նույն ուղղություններն ու ընդգրկումը, այն է՝ Լեռնային

---

[1] ***Ալեքսանյան Հ.,*** *Չճանաչված երկրի լրատվությունը. ԼՂՀ տեղեկատվական դաշտի համապատկերը և հիմնախնդիրները, Ստեփանակերտ, 2011 թ., էջ 138:*

[2] *Տես՝* ***ԼՂՀ տեղեկատվության և մամուլի վարչության կանոնադրությունը և կառուցվածքը հաստատելու մասին N 9 որոշումը*** *(«27» հունվարի 1998թ.): URL: http://arlexis.am/DocumentView.aspx?DocID=4627 (վերջին այցելությունը՝27.07.2019):*

[3] *Տես՝* ***ԼՂՀ կառավարությանն առընթեր տեղեկատվության վարչության կանոնադրությունը և կառուցվածքը հաստատելու մասին N 223 որոշումը*** *(«21» հոկտեմբերի 2000թ.): URL: http://arlexis.am/DocumentView.aspx?DocID=5893 (վերջին այցելությունը՝27.07.2019):*

Ղարաբաղի Հանրապետության տեղեկատվական քաղաքականության մշակումն ու իրականացումը:

Տևական ժամանակ անց՝ 2007 թվականին, օրենսդիրը քայլեր ձեռնարկեց նաև տեղեկատվական դաշտի օրենսդրական կարգավորման, ասել է թե՝ ազատականացման ուղղությամբ: ԼՂՀ Քաղաքացիական օրենսգրքի ընդունումից հետո անհրաժեշտություն առաջացավ վերանայել գործող օրենքները, քանի որ դրանցում ամրագրված մի շարք հոդվածներ հակասում էին օրենսգրքին: Ասվածը վերաբերում էր հանրապետության կենսագործունեության բոլոր ոլորտներին, այդ թվում՝ տեղեկատվական դաշտին առնչվող օրենքներին: Գործող օրենքների նկատմամբ ելակետ ընդունելով օրենսգրքի գերակայությունը՝ Ազգային ժողովը ընդունեց «Զանգվածային լրատվության մասին» (ոչ թե «Զանգվածային լրատվության միջոցների», որն այդ շրջանում ԶԼՄ-ներին առնչվող միակ օրենքն էր) և «Տեղեկատվության ազատության մասին» օրենքները:

Դառնալով սույն օրենսդրական մեդիակարգավորումներին՝ նախաձեռնության հեղինակ, ԱԺ արտաքին հարաբերությունների, միջխորհրդարանական կապերի և լրատվության հանձնաժողովի նախագահ Վահրամ Աթանեսյանը հարցազրույցներից մեկում նկատում է, որ օրենքների համար հիմք են հանդիսացել մարդու իրավունքներից և հիմնարար ազատություններից բխող դրույթները, ըստ որոնց՝ յուրաքանչյուր ոք ունի տեղեկություններ փնտրելու, ստանալու և տարածելու իրավունք և, միաժամանակ, այն, որ ԱԺ-ն 2001 թվականից գործունեություն է ծավալում Եվրոպայի խորհրդի առջև Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունների շրջանակներում[1]: Այս առնչությամբ գործող օրենսդրության համապատասխանեցումը համաեվրոպական չափանիշներին, փաստորեն, նաև անհրաժեշտություն էր: Այսինքն՝ վերոնշյալ երկու օրենքների ընդունմամբ պետական մարմինները ոլորտում փաստացի ձեռնարկեցին փոփոխություններ. երևույթ, որ խոսում է երկրում տեղեկատվական մթնոլորտի վերափոխման ցանկության մասին:

Այս կապակցությամբ եղան շահագրգիռ քննարկումներ, որոնց արձագանքներն առավելապես արտացոլված են «Դեմո» հանրային երկշաբաթաթերթում: Մեկնաբանելով տեղեկատվական դաշտի փոփոխությունները՝ ԼՂՀ նախագահի աշխատակազմի տեղեկատվական վարչության պետ Դավիթ Բաբայանը նշել էր, որ փոփոխություններ լինելու են և՛ արտաքին, և՛ ներքին տեղեկատվական քաղաքականության մեջ: Ըստ պաշտոնական կարծիքի, ներքին տեղեկատվական քաղաքականության համար առաջնահերթ է լինելու իշխանության տարբեր ճյուղերի գործունեության,

---

[1] *Տե՛ս* ***«Դեմո» արցախյան հանրային երկշաբաթաթերթ,*** *№ 12/15 սեպտեմբեր, URL: https://demonewspaper.press/2004-2/demo-n12-september-2004/ (վերջին այցելությունը՝ 27.07.2019):*

կառավարման բոլոր մարմինների աշխատանքի լիարժեք լուսաբանումը, ինչպես նաև առկա գործընթացների մասին հանրության տեղեկացվածության մակարդակի բարձրացումը: Մյուս կողմից՝ զանազան տեղեկատվական խողովակներով միջազգային հանրությունը տեղեկացված է լինելու ներհանրապետական անցուդարձին[1]:

«Որ տեղեկատվական դաշտը թարմացման կարիք ունի՝ կարելի էր հասկանալ վաղուց, և շատերը կարող էին հասկանալ, քանի որ մեր տեղեկատվական դաշտը ոչ միայն ժամանակից հետ էր մնում, այլ նաև, կարելի է ասել, կարծես թե ժամանակից դուրս էր: Որ արդյունքում տեղեկատվական դաշտը համեմատաբար ավելի լավն ու ավելի հետաքրքիր է լինելու՝ միանշանակ է: Արցախյան հանրապետական-պետական լրատվամիջոցները փոքր-ինչ ավելի մոտ են լինելու հանրությանը, թեև դա չի լինելու իշխանություններից նույնչափ հեռանալու հաշվին»,- տեղեկատվական քաղաքականության վերաբերյալ այսպիսի կարծիք ունի Ստեփանակերտի մամուլի ակումբի նախագահ Գեղամ Բաղդասարյանը: Բայց և չի բացառում, որ ցանկության, սկզբունքայնության ու հաստատակամության պարագայում տեղեկատվական դաշտի բարելավման ճանապարհին անլուծելի խնդիրներ չեն լինի:

Նույն ժամանակահատվածում «Ազատ Արցախ» հանրապետական թերթը ևս անդրադարձավ տեղեկատվական քաղաքականությանը՝ խմբագրականի տեսքով: Հանրապետության մայր թերթը, սակայն, խուսափեց մեկնաբանել, առավել ևս գնահատականներ տալ հասարակական-քաղաքական շրջանակներում ամենաշատ քննարկված հարցին՝ փոխարենը վերացական խորհուրդներ տալով ԶԼՄ-ներին քաղաքական իրադարձություններ լուսաբանելիս փնտել «մեր շահը այդ մրցապայքարում»[2]: Թերթի նորանշանակ խմբագիր Մուրադ Պետրոսյանը NoNuMe ProjectT Karabakhlive.com-ին տված հարցազրույցում, որը տպագրվել էր նաև «Ազատ Արցախ» թերթի նոյեմբերի 9-ի համարում, մանրամասն խոսել է թերթի տեղեկատվական քաղաքականության վերափոխման մասին: Վերջինս «Что делать?» հեղինակային թերթի հիմնադիրն էր և թերթն օգտագործում էր ղարաբաղյան խնդրի կարգավորման շուրջ իր տեսակետը լայն հանրությանը հասցնելու համար: Ընդդիմադրի հռչակ ունեցող Մ. Պետրոսյանին հանրապետական թերթի գլխավոր խմբագրի պաշտոնում նշանակելը խոսում էր իշխանությունների՝ տեղեկատվական քաղաքականության վերանայման մասին: Այս մասին են փաստում նաև նշյալ հարցազրույցում տեղ գտած մի քանի մտքեր:

---

[1] *Տե՛ս **«Դեմո» արցախյան հանրային երկշաբաթաթերթ**, № 19/15 նոյեմբեր, URL: https://demonewspaper.press/2007-3/demo-n-19-2007/ (վերջին այցելությունը՝ 27.07.2019):*

[2] ***«Ազատ Արցախ» հանրապետական թերթ**, # 130 (2100), 13 նոյեմբեր, 2007թ., էջ 1:*

Այսպես, թերթի պատասխանատուն «Что делать?»-ի հրատարակումը անիմաստ է գտնում, քանի որ «Արցախի գլխավոր թերթն իր էջերում պետք է արտացոլի հասարակության մեջ տեղ գտած էական դիրքորոշումները… նրա հիմնական ուրվագիծը, զարկերակը, նյարդերը»: Մ. Պետրոսյանը հիշեցնում է նաև Բակո Սահակյանի իշխանության գալու նպատակների մասին, այն է՝ որակական փոփոխություններ կատարել Արցախի և արցախցիների կյանքում, պայմաններ ստեղծել պետական մեխանիզմը արդյունավետ գործողության մեջ դնելու համար: «Նույն գերբարդ գործընթաց իրականացվում է պետական և հասարակական ինստիտուտների, կազմակերպությունների միջոցով: … Այդ ինստիտուտներից մեկն էլ հանդիսանում է մամուլը, տվյալ դեպքում՝ «Ազատ Արցախ»-ը: Նրա, ինչպես նաև բազմաթիվ նախարարությունների գերատեսչությունների և կազմակերպությունների գործունեությունը պետք է արմատապես փոխվի»[1],- ասում է նա՝ հղում անելով ամերիկյան քաղաքական ասացվածքին, թե «տեղեկատվական քաղաքականության (քարոզչության) գործում ներդրված մեկ դոլարը հավասար է պաշտպանության գործում ներդրված երկու դոլարին»:

Այն, որ իշխանությունները գիտակցում էին տեղեկատվության արժեքն ու այն ուղղորդելու կարևորությունը, անհերքելի է: Այս շրջանում տեղեկատվական դաշտում ուղենիշներ սահմանելուն ուղղված քայլերից էր նաև նախագահի հանդիպումը Հանրապետությունում գործող ԶԼՄ-ների ներկայացուցիչների հետ: Հանդիպման ընթացքում նախագահը տեղեկատվական դաշտը համեմատել է «ֆիդայական ժամանակաշրջանի» հետ՝ բացահայտ ակնարկելով, որ ռազմավարական խնդիրների վերաբերյալ լրատվադաշտում չկան հստակ մոտեցումներ: «Հանրապետության առջև ծառացած մարտահրավերները մեզ թույլ չեն տալիս այսուհետև մնալ ԶԼՄ-ների գործունեության ներկա աննպատակ և աննպատակահարմար մակարդակի վրա»,- ԶԼՄ-ների գործունեությունն այսպես է որակել նախագահը՝ ընդգծելով իր շահագրգռվածությունը «լրատվամիջոցներում քննադատության առկայությամբ, քանի որ առանց նման վերահսկողության հնարավոր չէ արդյունավետ կերպով կարգավորել երկրի ներքին կյանքը»[2]: Հպանցիկ նկատենք, որ իշխանությունների և հատկապես նախագահի անմիջական շփումները ԶԼՄ ներկայացուցիչների հետ բացառիկ երևույթ էր, քանի որ նման փորձ Հանրապեությունում նախքան այդ չէր դիտարկվել:

ՌԴ համապատասխան հայեցակարգը տեղեկատվական քաղաքականությունը սահմանում է իբրև «ազգային շահերն արտացոլող նպատակների, դրանց իրականացման ռազմավարական ուղղությունների և միջոցառումների համակարգի ամբողջություն, որը դիտարկվում է իբրև

---

[1] ***«Ազատ Արցախ» հանրապետական թերթ,*** *# 129 (2099), 9 նոյեմբեր, 2007թ., էջ 3:*

[2] ***«Ազատ Արցախ» հանրապետական թերթ,*** *# 137 (2107), 7 դեկտեմբեր, 2007թ., էջ 1-2:*

պետության ներքին և արտաքին քաղաքականության կարևոր բաղկացուցիչ»[1], որի համար հիմք պիտի հանդիսանա միասնական տեղեկատվական դաշտը: Այս մասին աշխարհը վաղուց է խոսում, համահայկական տեղեկատվական դաշտի մասին էլ խոսակցությունները վաղուց են սկսել: Չեն դադարում նաև ազգային/պետական միասնական դաշտի վերաբերյալ խոսակցությունները: Սա նշանակում է՝ ստեղծել հավասարապես հասանելի միջավայր, որտեղ հաղորդակցումն իրականացվում է պետության և հասարակության հետաքրքրությունների տիրույթում:

Հոդվածի սկզբում նկատել ենք, որ տեղեկատվական միասնական դաշտի ստեղծումը, տեղեկատվական քաղաքականության ներդրումը կարող են իրականություն դառնալ գիտելիքի և տեղեկության վրա հիմնված հասարակության դեպքում. հանգամանք, որի գիտակցմամբ 2009 թվականին Արցախում շոշափելի դարձան տեղեկատվական հասարակության ձևավորման հիմքերը: Կառավարության՝ «տնտեսության մեջ արտադրողականության բարձրացման և ավելի բարձր արժեքի ստեղծման» նպատակներից բխեցվեցին տնտեսական զարգացման նախարարության ռազմավարության առանձին ուղղություններ: Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի ձևավորումն ու տեղեկատվական հասարակության կայացումը կարևորվում էր երկրի տնտեսության արտադրողականության աճի, մրցունակության բարձրացման, գիտելիքահենք տնտեսության կայացման նախադրյալների և պետական քաղաքականության մշակմանը հասարակության ներգրավվածության ապահովման, *պետություն- մասնավոր հատված-հասարակություն* ինստիտուցիոնալ համագործակցության և հետադարձ կապի ստեղծման, կոռուպցիոն ռիսկերի նվազեցման տեսանկյունից[2]: Այսինքն՝ նախատեսվում էր ներդնել անհատի տեղեկատվական իրավունքների իրացման և պահանջների բավարարման զանգվածային համակարգ:

Վերոնշյալը հիմք է տալիս ասելու, որ անկախ հանրապետության գոյության մոտ երեք տասնյակ տարիներին Արցախում ստեղծվել են տեղեկատվական քաղաքականության ներդրման և իրականացման հիմքեր, բայց ոչ տեղեկատվական փաստացի ռազմավարություն: Մյուս կողմից՝ մեդիատիրույթի որոշ իրողություններ փաստում են, որ ներքին և արտաքին տեղեկատվական հոսքերի ուղղորդման որոշակի քայլեր ձեռնարկվում են: Սակայն այլ բան է ազգային շահերն արտացոլող, դրանց իրականացման հիմնական ուղղություններն ու մեխանիզմները սահմանող, սոցիալ-

---

[1] ***ՌԴ տեղեկատվական քաղաքականության հայեցակարգ,*** *URL: http://komitet5.km.duma.gov.ru/ (վերջին այցելությունը՝27.07.2019):*

[2] *Տե՛ս* ***ԼՂՀ տնտեսական զարգացման նախարարության առաջիկա ռազմավարությունը հաստատելու մասին N 161-Ն որոշումը*** *(«24» մարտի, 2009թ.): URL:http://arlexis.am/DocumentView.aspx?DocID=4694 (վերջին այցելությունը՝27.07.2019):*

տնտեսական, քաղաքական և մշակութային զարգացման վրա տեղեկատվական քաղաքականության ներգործության արդյունքներն ամփոփող փաստաթղթի առկայությունը: Ասվածը իրականություն կարող է և պիտի դառնա հասարակական և քաղաքական կամքի դրսևորման պայմաններում: Հատկապես քաղաքական օրակարգը թելադրում է տեղեկատվության կառավարման հստակ մեխանիզմներ: Համաշխարհային և տարածաշրջանային ներկայիս մարտահրավերների համատեքստում Արցախի համար տեղեկատվական համակարգային քաղաքականության մշակումն ու ներդրումը ոչ միայն արդիական է, այլև խիստ անհրաժեշտ:

Գրականություն

1. **Ալեքսանյան Հ.,** Չճանաչված երկրի լրատվությունը. ԼՂՀ տեղեկատվական դաշտի համապատկերը և հիմնախնդիրները, Ստեփանակերտ, 2011 թ.:
2. **Манойло А.В.** Государственная информационная политика в особых условиях: Москва, 2003:
3. **Нисневич Ю.,** Информационная политика России: проблемы и перспективы, Москва, 1998:
4. **Попов В.Д.,** Информациология и информационная политика. Москва, 2001, стр. 68:
5. **«Ազատ Արցախ» հանրապետական թերթ,** #130 (2100), #129 (2099), #137 (2107):
6. **«Դեմո» արցախյան հանրային երկշաբաթերթ,** № 12/15, № 19/15:
7. **ԼՂՀ կառավարությանն առընթեր տեղեկատվության վարչության կանոնադրությունը և կառուցվածքը հաստատելու մասին որոշումը:**
8. **ԼՂՀ տեղեկատվության և մամուլի վարչության կանոնադրությունը և կառուցվածքը հաստատելու մասին որոշումը:**
9. **ԼՂՀ Տնտեսական զարգացման նախարարության եռամյա ռազմավարությունը հաստատելու մասին որոշումը:**
10. **ՌԴ տեղեկատվական քաղաքականության հայեցակարգ:**
11. **WITSA statement on the wold summit on the information society,** draft declaration of principals and action plan.

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական խորհրդի անդամ, բ.գ.դ. Ս.Ա.Խանյանը: